ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«25» մարտի 2016թ. № 50-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 2-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1.Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ», «ե» և «զ» պարբերություններով.

«դ. էլեկտրոնային ձևով ապրանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.4-ի,

ե. էլեկտրոնային ձևով աշխատանքների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.5-ի,

զ. էլեկտրոնային ձևով ծառայությունների գնման հրավերի տեքստի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 5.2.6-ի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից:

Գ.Խաչատրյան